

Հարց

Էներգետիկայի բնագավառում գործունեության որ տեսակները կարգավորման ենթակա չեն:

Պատասխան

Կարգավորման ենթակա չեն

- 1) բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները.
- 2) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 մեգավատտը.
- 3) մինչև 150 կիլովատտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում.
- 4) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել-գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը.
- 5) բացառապես սեփական կարիքների համար, ինչպես նաև մինչև 150 կիլովատտ դրվածքային հզորությամբ ինքնավար արտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում: